ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

N 246
8.9.2021 Թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն մարզպետ, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի՝ Ձեզ ենք ուղարկում Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատ.՝ Աշխատակազմի քարտուղար Ա. Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2021 թվականի N 118-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Անդրանիկ Ավետիսի Մելյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Նոր Արտամետ համայնքի 23-րդ փողոց N 55 հասցեում գտնվող 0.0901 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (ծածկագիր՝ 0024-0004, վկայական N 12032021-07-0066) բնակելի տան վերակառուցման, ծածկոցի, գոմի և քարե պարսպի կառուցման շինարարության թույլտվություն:
2. Պարտավորեցնել Անդրանիկ Մելյանին.
   1) շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինական պետական կոմիտեին՝ համաձայն N 2-5 ձևի.
   2) մուծելու սահմանված տեղական տուրքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2021 թվականի օգոստոսի 31
գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2021 թվականի N 119-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 22.1-ին հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման N 1 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1. Յուրիկ Հովհաննիսյանին, Սիլվա Հովհաննիսյանին, Հովհաննես Հովհաննիսյանին, Հարություն Հովհաննիսյանին և Արմինե Հովհաննիսյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) սեփականության իրավունքով իրենց պատկանող, Նոր Արտամետ համայնքում գտնվող 0.17 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասում ջերմոցային տնտեսության կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2021 թվականի օգոստոսի 31

գ. Նոր Արտամետ